ՀՏԴ : 929:781(479.25) Կոմիտաս +947.925«1915» +
929:781(479.25)Մանսուրյան
DOI https://doi.org/10.52853/25792830-2021.1-18

ԿՈՄԻՏԱՍԻՆ ԵՎ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ՏԻԳՐԱՆ ՄԱՆՍՈՒՐՅԱՆԻ ԵՐԿԵՐԸ

ԱՆՆԱ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ*

Կոմիտասին և Հայոց ցեղասպանությանը նվիրված ստեղծագործությունների շարքում նշանակալի տեղ են գրավում հայ մեծանուն կոմպոզիտոր Տիգրան Մանսուրյանի (ծնվ. 1939) երկերը: Այդ թեմային Մանսուրյանն անդրադարձել է դեռևս 1960-ականների վերջում: Սակայն առավել ուշագրավ են վերջին տասնամյակում նրա ստեղծած խոշոր կտավի գործերը, ինչպիսիք են «Ու՞ր է Աբել եղբայր քո...» Թավջութակի և լարային նվագախմբի թիվ 4 կոնցերտը (2010), Ռեքվիեմը՝ մենակատարների, խառը երգչախմբի և կամերային նվագախմբի համար (2011), *Sonata da chiesa*-ն ալտի և դաշնամուրի համար (2015): Վերոնշյալ երկերի երաժշտական լեզուն և ոճական առանձնահատկությունները վկայում են, որ Տ. Մանսուրյանը հանդես է գալիս որպես Կոմիտասի ստեղծագործական ավանդույթների անմիջական ժառանգորդ և նորարար, ում գործերը մեծապես հարստացրել են հայ արդի երաժշտությունը, նոր որակ հաղորդելով հայ կոմպոզիտորական մտածողությանը:

Բանալի բառեր – Տիգրան Մանսուրյան, Կոմիտաս, Հայոց ցեղասպանություն, Ռեքվիեմ, հայ ժամանակակից երաժշտություն:

Ներածություն

Հայ արվեստագետներին Մեծ եղեռնի թեման հուզել է տարիներ ի վեր: Բավական է հիշատակել թեկուզ այնպիսի ցայտուն և նշանակալի ստեղծագործություններ, ինչպիսիք են Պարույր Սևակի՝ Կոմիտասին նվիրված «Անլռելի զանգակատուն» պոեմը, Էդգար Հովհաննիսյանի «Անտունի» բալետը, Պերճ Զեյթունցյանի «Ոտքի, դատարանն է գալիս» և «Մեծ լռություն» թատերգությունները, Գրիգոր Խանջյանի, Սարգիս Մուրադյանի, Մինաս Ավետիսյանի, Ժանսեմի, Հակոբ Հակոբյանի կտավները, Հենրիկ Մալյանի «Նահապետ», Անրի Վերնոյի «Մայրիկ» և Ատոմ Էգոյանի «Արարատ» ֆիլմերը, որպեսզի պարզ դառնա, թե որքան է այդ թեման իր չմարող հիշատակով և այժմեականությամբ այրել հայ արվեստագետի հոգին և ստեղծագործ միտքը: Վերջին տարիներին Եղեռնի թեմային գրականության մեջ և արվեստում անդրադարձել են նաև մի շարք օտարազգի գրողներ, կինոբեմադրիչներ և արվեստի այլ ճյուղերը ներկայացնող արվեստագետներ: Դրանց թվում՝ Տավիանի եղբայրները («Արտույտի ագարակը», 2007), Թերրի Ջորջը («Խոստում», 2016) և այլք:

Այս թեմային անդրադարձել ենք տակավին Եղեռնի 90-ամյակի առիթով[1], սակայն հետագա տարիների ընթացքում գրվել են նոր ուշագրավ

* ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի երաժշտության բաժնի առաջատար գիտաշխատող, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, anna_arevshatyan@hotmail.com, հոդվածի ներկայացման օրը՝ 14.01.2021, գրախոսման օրը՝ 15.02.2021, տպագրության ընդունման օրը՝ 22.02.2021:

ստեղծագործություններ: Հայ կոմպոզիտորները հարստացրել են կամերային, խմբերգային և սիմֆոնիկ ժանրերը տվյալ թեման արծարծող ինքնատիպ երկերով, ուստի միանգամայն տրամաբանական էր նաև մեր ուշադրությունն այդ գործերի նկատմամբ:

Կոմիտասին նվիրված երկերը

Նորագույն շրջանի հայ երաժշտության առանցքային դեմքը, անկասկած, հայ դասական կոմպոզիտորական դպրոցի հիմնադիր Կոմիտաս վարդապետն է (1869-1935), բացառիկ մի ստեղծագործող, ով մեկ անձի մեջ միավորել է կոմպոզիտորի, գիտնականի, բանահավաքի, խմբավարի, երգչի և մանկավարժի գործունեությունը: Բեռլինի Արքայական համալսարանի շրջանավարտը տակավին երիտասարդ տարիքում իր վրա բևեռեց իր նշանավոր դասախոսների՝ Օսկար Ֆլայշերի, Հայնրիխ Բելլերմանի, Լյուդվիգ Ֆրիդլենդերի ուշադրությունը: Նրա երաժշտության դասախոսն էր Ռիխարդ Շմիդտը, ում մասնավոր կոնսերվատորիայում նա զուգահեռաբար ի մի բերեց իր գիտելիքները երաժշտատեսական առարկաներից և մշակեց ձայնը: Օ. Ֆլայշերի առաջարկով նա շուտով դարձավ նորաստեղծ Միջազգային երաժշտական ընկերության հիմնադիր անդամներից մեկը: Կոմիտասի դասախոսությունները՝ նվիրված հայ ժողովրդական և հոգևոր երաժշտությանը, նրա կազմակերպած երգչախմբային համերգները մեծ արձագանքի արժանացան Եվրոպայի և Մերձավոր Արևելքի տարբեր երկրներում: Կոմիտասի՝ նույնքան խորապես ազգային, որքան նորարարական գործերը, որոնք համահունչ էին XIX դ. վերջի – XX դ. սկզբի առաջատար երաժշտական ոճական ուղղություններին, հատկապես՝ իմպրեսիոնիզմին, ուղեցույց հանդիսացան իր իսկ հիմնադրած հայ ազգային կոմպոզիտորական դպրոցի տարբեր սերունդների ներկայացուցիչներից շատերի համար: Կոմիտաս վարդապետի ողբերգական ճակատագիրը, ով լիուլի բաժանեց իր ժողովրդին բաժին հասած փորձությունները՝ աքսոր, հայրենազրկություն, տարագրություն և այլն, խաթարեցին հանճարեղ երաժշտի և գիտնականի հոգեկան աշխարհը, դարձնելով նրան հայ ժողովրդի մի տեսակ խորհրդանիշ, բնորոշ կերպար, եթե չասենք՝ սրբապատկեր, որը հետագայի ստեղծագործողների համար դարձավ ոգեշնչման աղբյուր՝ ծնելով Կոմիտաս վարդապետին ձոնված մի շարք երկեր:

Բազմաթիվ երաժշտական գործեր ստեղծվեցին Կոմիտասի ծննդյան 100-ամյակի կապակցությամբ՝ 1969-ին: Հիշարժան է, օրինակ, այդ տարեթվին ձոնված մեր օրերի միջազգայնորեն ամենահայտնի հայ կոմպոզիտոր Տիգրան Մանսուրյանի (ծնվ. 1939) «Երեք ասացված» խմբերգային շարքը՝ Կոստան Զարյանի խոսքերով a cappella արական երգչախմբի համար, որ-

[1] Տե՛ս, օրինակ, **Արևշատյան Ա.**, Եղեռնը և հայ արդի երաժշտությունը, «Երաժշտական Հայաստան», 2005, № 2, էջ 9-12: Նույնը տե՛ս «Ազդակ Երկիր» բացառիկ, Պէյրութ, 24 ապրիլի 2005, էջ 61-64: Նույնի, Մեծ եղեռնի թեման հայ արդի կոմպոզիտորների երկերում, Հայոց ցեղասպանություն - 100. ճանաչումից՝ հատուցում. Միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Երևան, 2016, էջ 478-486:

տեղ տակավին երիտասարդ և երաժշտարվեստի ասպարեզում իր հաստատուն քայլերն անող կոմպոզիտորը հանդես եկավ որպես կոմիտասյան ստեղծագործական ավանդույթների անմիջական ժառանգորդ և նորարար: Արդեն 1960-ականների երկրորդ կեսից Մանսուրյանը դրսևորեց իրեն որպես երիտասարդ կոմպոզիտորական սերնդի առաջնորդ, իր մի շարք գործերում ուղենշելով հայ արդի երաժշտության հետագա տարիների հիմնական ստեղծագործական միտումները: Հիշենք նրա նվագախմբային «Պարտիտան» (1965), որտեղ ազգային մելոսի հիման վրա անդրադարձ կատարվեց XX դարի առաջատար ոճական ուղղություններից մեկին՝ նեոկլասիցիզմին, «Չորս հայրեն ըստ Նահապետ Քուչակի» վոկալ շարքը, որի մեջ Մանսուրյանը վերածնեց հայ միջնադարյան պոեզիայի և մոնոդիայի հարստագույն մի շերտ՝ այն օրգանապես միաձուլելով իր սեփական ոճին[2] կամ դաշնամուրային Սոնատը (1967), որտեղ արծարծվեցին հետպատերազմյան արևմտաեվրոպական ավանգարդիզմին բնորոշ երաժշտալեզվական արտահատչամիջոցները, որոնք նոր որակ հաղորդեցին այդ տարիների հայ կոմպոզիտորական մտածողությանը:

Հայոց ցեղասպանության թեման Տիգրան Մանսուրյանի ստեղծագործության մեջ

Ուշագրավ են Տիգրան Մանսուրյանի վերջին տարիների խոշոր ձևերի նշանակալի երկերը, որոնցում Հայոց ցեղասպանության թեման մշտապես առկա է:

Առաջին հերթին պետք է նշել նրա Ռեքվիեմը՝ սոպրանոյի, բարիտոնի, խառը երգչախմբի և լարային նվագախմբի համար (2011): Ռեքվիեմի մտահղացումը կոմպոզիտորին զբաղեցրել է վաղուց: Իր հայրենազուրկ ծնողների, Եղեռնից մազապուրծ եղած և Հալեպի ամերիկյան որբանոցներում ապաստանած երկու որբերի զավակ Տիգրան Մանսուրյանն այդ ստեղծագործության վրա աշխատել է շուրջ տասը տարի՝ ոչնչացնելով վերջնական մտահղացմանը նախորդող մի քանի տարբերակ: 2013 թ. այդ ստեղծագործության համար հեղինակն արժանացավ ՀՀ պետական մրցանակին:

Ստեղծագործության բավական համարձակ և աննախադեպ մտահղացումն իր մեջ զուգորդում է հայ միջնադարյան հոգևոր երգասացությունների ելևէջներից սերող երաժշտալեզուն և լատինական հոգեհանգստյան մեսսայի կանոնական տեքստը: Խառը երգչախմբի և լարային նվագախմբի հնչողությունը կարծես ներկայացնում է այդ պարտիտուրի երկու երեսակները. երկու հնչյունային հարթություն-տարածությունները՝ ձեռք բերելով սիմվոլիկ իմաստավորում:

Բեռլինի կամերային նվագախմբի և Բավարական ռադիոյի RIAS հայտնի երգչախմբի պատվերով ստեղծված Ռեքվիեմը Հայաստանում ընկալվեց ոչ միանշանակ, այնքան անսովոր, եթե չասենք ռիսկային էր թվում իր բնույթով տարբեր գեղարվեստական երևույթների նման զուգորդումը: Պատվիրա-

[2] Այդ ստեղագործությունների մասին տես **Аревшатян А.** Поэзия и монодия Средневековья в творчестве современных армянских композиторов. «Вестник общественных наук», 1978, №12, стр. 61-70.

տու երաժշտական խմբերի կողմից ներկայացված պահանջը, որ երկը գրված լինի Ռեքվիեմի լատինական կանոնական տեքստի հիման վրա, հեղինակին առաջադրեց մի գերխնդիր, որը, իմ կարծիքով, Մանսուրյանը լուծել է իրեն հատուկ վարպետությամբ: Նա կարծես «հայացրեց» լատինական տեքստը երաժշտական հայեցի ելևէջի միջոցով, դուրս բերելով հայ հոգևոր երգարվեստը նեղ ազգային շրջանակներից և ներկայացնելով աշխարհին հայկական հինավուրց մոնոդիան իր ողջ հարստությամբ, գեղեցկությամբ և համաշխարհային, համաքրիստոնեական նշանակությամբ: Այդ ամենը մարմնավորված է մեծ դրամատիզմով և փիլիսոփայական ընդհանրացումների հակումով հատկանշվող նրա անհատական ոճի հունի մեջ: Ոճ, որը խարսխված է արդի մոդալ և ազգային ձայնեղանակային երաժշտական լեզվամտածողության վրա[3]: Պատահական չէ, որ Մանսուրյանի Ռեքվիեմն արդեն զբաղեցրել է իր արժանի տեղը վերջին շրջանի կանտատային-օրատորիալ ժանրում, հաջողությամբ կատարվել ինչպես Հայաստանում, այնպես էլ՝ աշխարհի տարբեր երկրներում (Գերմանիա, Լեհաստան, Մեքսիկա, Հարավային Կորեա, Ռուսաստան և այլուր): 2015 թ. ստեղծագործությունը ներկայացվել է նաև Grammy մրցանակին:

Կոմպոզիտորի նշանակալի երկերից է նաև 2010 թ. թավջութակի և լարայինների համար գրված 4-րդ Կոնցերտը, որն օժտված է խորհրդանշական վերնագրով՝ Ubi est Abel frater tuus? – «Ու՞ր է Աբել եղբայր քո…», աղերսվելով հինկտակարանային առաջին եղբայրասպանության դիպվածի հետ: Հստակ է հեղինակի՝ համայն մարդկությանն ուղղված և խորը հումանիստական ուղերձի իմաստը: Ստեղծագործությունը պատվիրվել է Քյոլնի սիմֆոնիկ նվագախմբի կողմից և առաջին անգամ հնչել 2010 թ. ապրիլի 24-ին Քյոլնում[4]:

Երեքմասանի Կոնցերտում, որը ծավալվում է «դանդաղ-արագ-դանդաղ» շարժումով, դարձյալ՝ հենց սկզբից լսելի են Կոմիտասի «Անտունի» երգի ելևէջները: Դրանք յուրահատուկ ետնախորք և հնչյունային ծավալ են հաղորդում երաժշտությանը, ժամանակ առ ժամանակ նորից ու նորից առկայծելով Կոնցերտի ինքնատիպ և թափանցիկ պարտիտուրի հնչողության ընթացքում: Թավջութակի մենանվագը լի է խոհաքնարական, հայեցողական, խոստովանական, երբեմն նաև դրամատիկ զեղումներով, որոնք ներդաշնակորեն ուղեկցվում են լարայինների նվագամասով:

Եղեռնի թեմային առնչվող Մանսուրյանի մյուս ստեղծագործությունը Ստամբուլի միջազգային երաժշտական փառատոնի պատվերով գրված *Sonata da chiesa*-ն է (2015) ալտի և դաշնամուրի համար, որը, իմ կարծիքով,

---

[3] Առաջին անգամ Ռեքվիեմը հնչել է Բեռլինի ֆիլհարմոնիայի փոքր դահլիճում՝ 2011 թ. նոյեմբերի 19-ին Մյունխենի RIAS կամերային երգչախմբի և կամերային նվագախմբի կատարմամբ: Դիրիժոր՝ Ալեքսանդր Լիբրայխ: Հայաստանյան պրեմիերան տեղի ունեցավ 2012 թ. ապրիլի 24-ին՝ Ա.Խաչատրյան մեծ համերգասրահում, Հայաստանի պետական կամերային երգչախմբի և նվագախմբի կատարմամբ: Դիրիժոր՝ Ռոբերտ Մլքեյան:

[4] Դիրիժոր՝ Սեմյոն Բիչկով, մենակատար՝ Յան Ֆոգել:

կոմպոզիտորի կամերային-գործիքային ժանրում ստեղծած լավագույն գործերից է:

Սոնատը նվիրված է Կոմիտաս վարդապետին և Եղեռնի 100-ամյա տարելիցին: Մանսուրյանի *Sonata da chiesa*-ն հատուկ գրվել է ամերիկահայ հայտնի ալտահար Քիմ Քաշքաշյանի կատարողական ձիրքը նկատի ունենալով: Ուշագրավ է, որ ձոնված լինելով Կոմիտասին, այն առաջին անգամ հնչեց Ստամբուլում հենց այն եկեղեցում (դա հայկական թաղամասի հայոց պատրիարքարանի հարևանությամբ գտնվող Սբ. Աստվածածին Գում-Գաբուի մայր եկեղեցին է), որտեղ իր վերջին պատարագն է մատուցել Կոմիտաս վարդապետը՝ 1915 թ. ապրիլի 24-ի չարագուշակ օրվանից առաջ: Հենց այդ եկեղեցում կատարվելու հանգամանքն էլ պայմանավորեց ստեղծագործության մտահղացումը, բնույթն ու ժանրը:

Հայտնի է, որ *Sonata da chiesa*-ն Բարոկկո շրջանի՝ սովորաբար չորս մասից բաղկացած հորինվածք է, գրված դանդաղ և արագ մասերի իրար հակադրվող հաջորդականությամբ: Երկրորդ մասն ավանդաբար գրվում էր արագ շարժման մեջ՝ ունենալով ֆուգայի ձև, իսկ երրորդ և չորրորդ մասերը գրվում էին իբրև սարաբանդա կամ ժիգա: Տարածված է նաև այն կարծիքը, որ եկեղեցական սոնատները գրվել են բացառապես կրոնական արարողությունների ժամանակ կատարվելու համար, սակայն այդ երկերը, կրելով նաև կրոնական գործառույթ, հաճախակի կատարվել են որպես կոնցերտային պիեսներ աշխարհիկ միջավայրում: Այդ ժանրում աշխատել են այնպիսի կոմպոզիտորներ, ինչպիսիք են Արկանջելո Կորելլին, Յոհան Սեբաստիան Բախը և ուրիշներ:

Սոնատի հենց սկզբում պարզորոշ նշմարելի են Կոմիտասի «Կուժն առա» քնարական երգի ելևէջները, որոնք Մանսուրյանը դարձրել է կարծես ստեղծագործության նշանաբան: Սոնատն ընկալվում է իբրև քնարական մենախոսություն: Պետք է նշել, որ տվյալ երկի բանաստեղծական բնույթը, մեդիտատիվ մթնոլորտը հատուկ է Մանսուրյանի՝ ալտի համար ստեղծած գրեթե բոլոր գործերին: Գործիք, որի տեմբրը և հնարավորությունները, ինչպես ինքը՝ մաեստրոն է խոստովանել բազմիցս, իր ընկալմամբ օժտված է մի տեսակ միստիկ էությամբ և մեծ արտահայտչականությամբ:

Եզրակացություն

Հատկանշական է, որ Ցեղասպանության թեմային իրենց երկերում ակտիվորեն դիմել են նաև մի շարք այլ հայ արդի կոմպոզիտորներ, որոնց թվում հարկ է նշել, օրինակ, Հարություն Դելլալյանի «Նվիրում Կոմիտասին» դաշնամուրային Սոնատը (1980), Երվանդ Երկանյանի 3-րդ, 4-րդ և 5-րդ սիմֆոնիաները. դրանք համապատասխանաբար կրում են «Ձայն նահատակաց» (1983), «Նեմեզիս» (1986) և «Խաչված երազներ» (2011) խորագրերը, Էդվարդ Հայրապետյանի «1915» մեծածավալ օրատորիան՝ ստեղծված Ցեղասպանության ականատեսների և վերապրողների վկայությունների տեքստերի հիման վրա (1977), Վահրամ Բաբայանի «1915 թվական» ինքմասանի կանտատը՝ ժողովրդական, Կոմիտասի, Հովհաննես Հովհաննիսյանի և Սմբատ Շահազիզի խոսքերով (1995) և «Մուսա լեռան 40 օրը» երեք գործո-

ղությամբ օպերան՝ ըստ Ֆրանց Վերֆելի համանուն հանրահայտ վեպի (2004), Ռուբեն Սարգսյանի «Դեր-Զոր վերապրածի խոստովանանքը»՝ ֆլեյտայի, լարայինների և հարվածայինների համար (2005), որը 2007 թ. արժանացել է ՀՀ պետական մրցանակի և այլն[5]:

Ուշագրավ է, որ հիշատակված գործերի հեղինակները պատկանում են XX դարի 60-70-ական թվականներին ասպարեզ իջած այն սերնդին, որն իր ծանրակշիռ խոսքն ասաց հայ արդի երաժշտության բոլոր ժանրերում՝ միշտ մնալով «պատնեշին վրայ» և մեծ ներդրում կատարելով հայ կոմպոզիտորական դպրոցի նվաճումների համանվագի մեջ: Նրանք էին դարձյալ, որ գեղարվեստական բարձր մակարդակով իրենց ստեղծագործության մեջ բարձրաձայնեցին և արտացոլեցին Եղեռնի բարդ, պատասխանատու և համայն հայությանը հուզող այդ ցավոտ և նվիրական թեման:

ПРОИЗВЕДЕНИЯ ТИГРАНА МАНСУРЯНА, ПОСВЯЩЕННЫЕ КОМИТАСУ И ГЕНОЦИДУ АРМЯН

АННА АРЕВШАТЯН

В ряду сочинений, посвященных Комитасу и Геноциду армян, значительное место принадлежит произведениям выдающегося армянского композитора современности Тиграна Мансуряна (род. 1939). К этой теме Мансурян обратился еще в конце 1960-ых годов. Однако наиболее примечательны его сочинения крупной формы, созданные за последнее десятилетие, такие как Концерт № 4 для виолончели и струнного оркестра под названием «Где брат твой Авель?» (2010), Реквием для солистов, смешанного хора и камерного оркестра (2011), *Sonata da chiesa* для альта и фортепиано (2015). Музыкальный язык и стилистические особенности вышеназванных произведений свидетельствуют о том, что Т. Мансурян выступает как непосредственный продолжатель творческих традиций Комитаса и новатор, чьи сочинения во многом обогатили современную армянскую музыку, придав новое качество армянскому композиторскому мышлению.

Ключевые слова – Тигран Мансурян, Комитас, Геноцид армян, Реквием, армянская современная музыка.

[5] Այդ երկերի մասին մանրամասն տես **Արևշատյան Ա.**, Մեծ Եղեռնի թեման հայ արդի կոմպոզիտորների երկերում, Հայոց ցեղասպանություն – 100. ճանաչումից՝ հատուցում. Միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Երևան, 2016, էջ 478-486:

THE WORKS BY TIGRAN MANSURIAN DEVOTED TO KOMITAS AND ARMENIAN GENOCIDE

ANNA AREVSHATYAN

Among the works, dedicated to Komitas and the Armenian Genocide, the oeuvre of the outstanding contemporary Armenian composer Tigran Mansurian (born 1939) holds a special position. T. Mansurian addressed this topic back at the end of the 1960s. Most notable are, however, his large-scale compositions, created over the past decade, such as *Concerto* No. 4 for cello and string orchestra, *"Where is thy brother Abel?"* (2010), *Requiem* for soloists, mixed choir and chamber orchestra (2011), *Sonata da chiesa* for viola and piano (2015). The musical language and stylistic peculiarities of the above works testify to the fact that T. Mansurian is a direct successor to Komitas' creative traditions and an innovator, too, whose works have largely enriched contemporary Armenian music, imparting a new quality to the Armenian compositional thought.

Key words – Tigran Mansurian, Komitas, Armenian Genocide, Requiem, Armenian contemporary music.